ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

28.04.2021թ.
Ժամը 15^{30}

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետ Ա. Ասատրյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ է. Համբարձումյանը,
ՀՀ ՋՈՒ ԲՀԱ վարչության ՄՇԺԱ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Կ. Ավագյանը,
Գնումները համակարգող՝ ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 3-րդ բաժնի պետ Ա. Սահակյանը:
Բացակայում էր ՀՀ ՋՈՒ ԲՀԱ վարչության ՄՇԺԱ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Օհանյանը:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա.Սահակյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Սահակյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար էլեկտրական սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	**Մասնակիցների անվանումը**
1	«Բոնիննի» ՍՊԸ
2	«ՎԱԼՍԱ» ՍՊԸ
3	«ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ
4	«ՓԻ-ԼԵՆԴ» ՍՊԸ
5	«Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Ա. Սահակյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ հետևյալ դեպքերի.
ա) «Բոնիննի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի՝
N 1 Հավելվածում (գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարության մեջ)՝ իրական շահառուների մասին տեղեկատվության (աղյուսակի «Անունը, Ազգանունը, Հայրանունը» դաշտում) մեջ, լրացված չէ իրական շահառուի հայրանունը:
N 1.1 Հավելվածում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում)՝ 3-րդ չափաբաժնով (թվային ֆոտոապարատ) առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում, թերի է լրացված տվյալ ապրանքի համար սույն ընթացակարգի հրավերով պահանջվող՝ եռոտանի տեղադրման հնարավորության վերաբերյալ տեղեկատվությունը, մասնավորապես՝ բացակայում է «հնարավորություն» բառը, ինչպես նաև բացակայում է «թվային ֆոտոապարատին հիշողության քարտ առնվազն 16 գ/բ» տեղեկատվությունը:
բ) «ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի N 1.1 Հավելվածում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում)՝ 3-րդ չափաբաժնով (թվային ֆոտոապարատ) առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում, նշված է՝ նկարահանման հեռավորությունը 0.01մ, մինչդեռ սույն ընթացակարգի հրավերով պահանջվել է՝ նկարահանման նվազագույն հեռավորությունը առնվազն 0.1մ, ինչպես նաև նշված է՝ համապատասխանության սերտիֆիկատի տրամադրում, սակայն նշված չէ, որ այն պետք է տրամադրվի ապրանքը պատվիրատուին մատակարարելուց:

գ) «ՓԻ-ԼԵՆԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի N 1.1 Հավելվածում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում)՝ 3-րդ չափաբաժնով (թվային ֆոտոապարատ) առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում, թերի է լրացված տվյալ ապրանքի համար սույն ընթացակարգի հրավերով պահանջվող՝ եռոտանի տեղադրման հնարավորության վերաբերյալ տեղեկատվությունը, մասնավորապես՝ բացակայում է «հնարավորություն» բառը, ինչպես նաև բացակայում է «թվային ֆոտոապարատին հիշողության քարտ առնվազն 16 գ/բ» տեղեկատվությունը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ **28.04.2021**թ. կայացած նիստում սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցեց վերոնշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

2.4 **03.05.2021**թ. կայացած նիստում սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ սահմանված ժամկետում մասնակիցները շտկել են արձանագրված անհամապատասխանությունները, բացառությամբ «ՓԻ-ԼԵՆԴ» ՍՊԸ-ի, որը սահմանված ժամկետում որևէ փաստաթուղթ չի ուղարկել սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը՝ սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց «ՓԻ-ԼԵՆԴ» ՍՊԸ-ի հայտը՝ սույն ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով, գնահատել անբավարար սույն ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժեց նրա հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Ա. Սահակյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.*

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Ընդհանուր (նախահաշվային) գին՝ ՀՀ դրամը	Մասնակիցների անվանումը	Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ՝ (ՀՀ դրամ)	Ընդհանուր գին (ՀՀ դրամ)
1	Հեռուստացույց 43"	հատ	150	21,750,000	«Բոնիննի» ՍՊԸ	36,000,000		36,000,000
					«ՓԻ-ԼԵՆԴ» ՍՊԸ	36,500,000	7,300,000	43,800,000
2	Ռադիոընդունիչ	հատ	400	4,000,000	«ՎԱԼՍԱ» ՍՊԸ	3,320,000	664,000	3,984,000
					«Բոնիննի» ՍՊԸ	3,960,000		3,960,000
					«ՓԻ-ԼԵՆԴ» ՍՊԸ	4,000,000	800,000	4,800,000
3	Թվային ֆոտոապարատ	հատ	20	2,800,000	«ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ	2,694,000		2,694,000
					«Բոնիննի» ՍՊԸ	2,800,000		2,800,000
4	Ձայնային սարքավորում	հատ	10	6,250,000	«Բոնիննի» ՍՊԸ	6,230,000		6,230,000
					«ՓԻ-ԼԵՆԴ» ՍՊԸ	6,240,000	1,246,000	7,486,000
5	Տեսապրոյեկտոր	հատ	10	5,200,000	«Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ	3,290,000	658,000	3,948,000
					«ՎԱԼՍԱ» ՍՊԸ	4,300,000	860,000	5,160,000
					«Բոնիննի» ՍՊԸ	5,160,000		5,160,000
					«ՓԻ-ԼԵՆԴ» ՍՊԸ	5,200,000	1,040,000	6,240,000

*«ՓԻ-ԼԵՆԴ» ՍՊԸ-ի՝ սույն ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ներկայացրած գնային առաջարկի վերաբերյալ տեղեկատվությունը վերը ներկայացված աղյուսակում ներառված չէ, քանի որ վերջինիս հայտը տվյալ չափաբաժնի մասով մերժվել է:

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են), բացառությամբ «ՓԻ-ԼԵՆԴ» ՍՊԸ-ի, մասնավորապես՝ սույն ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկում (Հավելված N 2) սխալ է հաշվարկվել ավելացված արժեքի հարկի՝ ԱԱՀ-ի, հետևաբար նաև ընդհանուր գնի չափը՝ ԱԱՀ-ի համապատասխան դաշտում նշված է «1,246,000», մինչդեռ պետք է նշվեր «1,248,000»՝ հաշվի առնելով ՀՀ հարկային օրենսգրքի 63-րդ հոդվածով նախատեսված 20% դրույքաչափը, իսկ ընդհանուր գնի համապատասխան դաշտում նշված է «7,486,000», մինչդեռ պետք է նշվեր «7,488,000»:

Ելնելով վերոգրյալից՝ **03.05.2021**թ. կայացած նիստում սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց «ՓԻ-ԼԵՆԴ» ՍՊԸ-ի հայտը՝ սույն ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով, գնահատել անբավարար սույն ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժեց նրա հայտը:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հայտ ներկայացրած և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցների՝ «Բոնիննի» ՍՊԸ-ի և «ՓԻ-ԼԵՆԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում են տվյալ չափաբաժնի մասով նախատեսված ապրանքների գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները (նախահաշվային գինը), իսկ նույն ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի՝ «Բոնիննի» ՍՊԸ-ի հայտը, ուստի **03.05.2021**թ. կայացած նիստում սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի և սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.6 ու 8.7 կետերի պահանջները, որոշեց կասեցնել նիստը և **06.05.2021**թ. ժամը **15⁰⁰**-ին ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) առաջարկված գների նվազեցման նպատակով նշված մասնակիցների հետ վարել բանակցություններ: Նույն օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը վերոնշյալ մասնակիցներին էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցեց առաջարկված գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Սահակյան)

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել **06.05.2021**թ. ժամը **15^{00}**-ին, ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Ա. Ասատրյան
Գնահատող	Է. Համբարձումյան
Գնահատող	Կ. Ավագյան
Գնումները համակարգող	Ա. Սահակյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 06.05.2021թ.
Ժամը 15[00]

Մասնակցում էին՝
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ է. Համբարձումյանը,
ՀՀ ՋՈՒ ԲՀԱ վարչության ՄՇԺԱ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Օհանյանը,
ՀՀ ՋՈՒ ԲՀԱ վարչության ՄՇԺԱ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Կ. Ավագյանը,
Գնումները համակարգող՝ ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 3-րդ բաժնի պետ Ա. Սահակյանը:
06.05.2021թ. կայացած նիստում բացակայում էր ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետ Ա. Ասատրյանը, սակայն վերջինս մասնակցել է հայտերի էլեկտրոնային գնահատմանը, իսկ նիստը նախագահում էր ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ է. Համբարձումյանը:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա.Սահակյան)

1. Տեղեկություններ բանակցությունների վարման արդյունքների մասին.
2. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
3. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.
4. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ բանակցությունների վարման արդյունքների մասին.

(Ա.Սահակյան)

1.1 Առաջարկված գների նվազեցման նպատակով նախատեսված բանակցություններին մասնակցելու համար ծանուցված մասնակիցները սահմանված ժամկետում չեն ներկայացել և վերջիններիս գնային առաջարկները մնացել են անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա.Սահակյան)

2.1 **11.05.2021թ.**-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ հայտարարել՝
1) «ՎԱԼՍԱ» ՍՊԸ-ին՝ 2-րդ չափաբաժնի մասով,
2 «ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ-ին՝ 3-րդ չափաբաժնի մասով,
3) «Բոնիննի» ՍՊԸ-ին՝ 4-րդ չափաբաժնի մասով,
4) «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ին՝ 5-րդ չափաբաժնի մասով:
Բավարար գնահատված մյուս մասնակիցները ճանաչվեցին հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ՝ ըստ համապատասխան չափաբաժինների համար ներկայացրած գնային առաջարկների շահավետության:
2.2 Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ չափաբաժնի մասով նախատեսված ապրանքների գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները (նախահաշվային գինը), ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները, որոշեց սույն ընթացակարգը նշված չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:
2.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:
2.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:
2.5 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.

(Ա.Սահակյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Ա.Սահակյան)

4.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Ա. Ասատրյան
Գնահատող	Է. Համբարձումյան
Գնահատող	Ա. Օհանյան
Գնահատող	Կ. Ավագյան
Գնումները համակարգող	Ա. Սահակյան